2024 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Որակի ապահովման բաժին

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3
ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....4
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 13
ԱՌԱՋԱՐԿՆԵՐ.....14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը (այսուհետ՝ ՀՖԿՍՊԻ), հետամուտ լինելով իր մատուցած կրթության և ուսումնաօժանդակ ռեսուրսների որակի բարելավմանը, նախաձեռնել է ամենամյա հարցում 2023-2024 ուսումնական տարվա առաջին կուրսի ուսանողների շրջանում բուհի և մասնագիտության ընտրության դրդապատճառները, քննական և ընդունելության գործընթացից վերջիններիս բավարարվածության աստիճանը ուսումնասիրելու և վերլուծության հիման վրա քայլեր ձեռնարկելու համար:

1 . Հետազոտության նպատակը

2023-2024 ուսումնական տարվա առաջին կուրսի ուսանողների հետ Որակի ապահովման բաժնի (այսուհետ՝ ՈԱԲ) կողմից իրականացված հարցումը նպատակ է ունեցել պարզելու ուսումնառողների՝ ՀՖԿՍՊԻ-ում սովորելու որոշման վրա ազդող գործոնները, բացահայտել տվյալ մասնագիտության ընտրության դրդապատճառները, վերհանել ուսանողների կրթական ակնկալիքներն ու սպասումները՝ արժևորելով կրթական միջավայրի բարելավման առաջնահերթությունները նրանց տեսանկյունից:

2. Հետազոտության ընտրանքը և մեթոդաբանությունը

Հետազոտության ընտրանքի հաշվարկի համար օգտագործվել է համապատասխան առցանց հաշվիչ: Վերջինս թվով 350 առաջին կուրսեցիների քանակի համար, 90% վստահության միջակայքի և 6% սխալի սահմանի պայմաններում (պատասխանների բաշխման 50% ցուցանիշի համաձայն) հաշվարկել է պահանջվող ընտրանքի չափից (123) մի փոքր ավելին՝ 125 ուսանող:

Հարցումն իրականացվել է առցանց տարբերակով՝ անանունության սկզբունքով: Հարցաշարը ներառում է 17 հարց, որից մեկը՝ բաց: 6,7,8,12 և 14-րդ հարցերի համար հնարավոր է ընտրել պատասխանի մի քանի տարբերակ, այդ իսկ պատճառով դրանց տոկոսային հանրագումարը գերազանցում է 100%–ը:

ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2023-2024 ուսումնական տարում Ինստիտուտ է ընդունվել 351 ուսանող: Սույն հետազոտությանը մասնակցել են ՀՖԿՍՊԻ–ի 125 առաջին կուրսեցի՝ Մարզչամանկավարժական (այսուհետ՝ ՄՄ) ֆակուլտետից 81 և Առողջարարական տեխնոլոգիաների, սպորտային տուրիզմի և կառավարման ֆակուլտետից (այսուհետ՝ ԱՏՍՏԿ)՝ 44 ուսանող (տե՛ս Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Ֆակուլտետ	Ընդունված ուսանողների քանակ	Հարցմանը մասնակցած ուսանողների քանակ	Տոկոսային հարաբերակցություն
Մարզչամանկավարժական ֆակուլտետ	271	81	30%
Առողջարարական տեխնոլոգիաների, սպորտային տուրիզմի և կառավարման ֆակուլտետ	80	44	55%
ԸՆԴՀԱՆՈՒՐ	**351**	**125**	**35,6%**

Այսպիսով, թեև հարցումն իրականացնելու համար կապ է հաստատվել երկու ֆակուլտետների բոլոր կուրսերի ավագների հետ, սակայն Մարզչամանկավարժական ֆակուլտետում հարցման մասնակցայնությունը 20%–ով քիչ է նախատեսված ներկայացուցչական ցուցանիշներից:

Հարկ է նաև նշել, որ առաջին կուրսի ուսանողները դեռ չեն պատկերացնում իրենց ֆակուլտետային պատկանելիությունը և նրանց հստակ թիվը հնարավոր է եղել ճշգրտել կրթական ծրագրերի միջոցով: Սա, թերևս, փաստում է, որ առաջին կուրսի ուսանողներին հարկավոր է ավելի լավ իրազեկել իրենց կրթական համակարգի մասին:

Ըստ ամբիոնների՝ բուհ ընդունված ուսանողների և հարցման մասնակիցների թվային տվյալները ներկայացված են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

№	Մասնագիտության կրթական ծրագրեր	Բուհ ընդունված ուսանողների թիվ	Հարցման մասնակից ուսանողների թիվ	Տոկոսային հարաբերակցություն
1	«Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ»	321	106	33%
2	«Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա»	26	16	63%
3	«Լրագրություն»	4	3	75%

Հարցմանը մասնակցության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է «Լրագրություն» (75%) և «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» (63%) կրթական ծրագրով ուսումնառողների մոտ: Հարցմանը մասնակցության ամենացածր ցուցանիշը եղել է «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» կրթական ծրագրում՝ 33%: Կարևոր ենք համարում այս ցուցանիշների համեմատության ներկայացումը, քանի որ ուսման առաջին տարում ուսանողների ցուցաբերած ակտիվությունը կարող է պատկերացում ստեղծել հետագայում ուսումնական գործընթացներում նրանց ներգրավվածության մասին:

Գծապատկեր 1



Հարցման մասնակիցների 40 %-ը Երևանից է, որին հաջորդում է Արագածոտնի մարզը (տե՛ս Գծապատկեր 1):

Հարց 6. Ինչպե՞ս եք իմացել Ինստիտուտի մասին:

Գծապատկեր 2



Ինչպես ցույց են տալիս ՈԱԲ ամենամյա հարցումները, բուհի մասին իրազեկումը պաշտոնական գործիքների միջոցով տեսանելի ազդեցություն չի ունենում դիմորդների շրջանում: Թեև բուհի մատուցած կրթության, կրթական ծրագրերի, առկա ռեսուրսների, կարիերայի հնարավորությունների և ուսումնառության մյուս գործընթացների վերաբերյալ հավաստի տեղեկություն կարելի է ստանալ միայն պաշտոնական աղբյուրներից, սակայն առաջին կուրսի հարցված ուսանողների միայն 6%-ն է իրազեկվել բուհի մասին ՀՖԿՍՊԻ կայքէջից (տե՛ս Գծապատկեր 2): Նրանց 4%–ը Ինստիտուտի մասին իմացել է բուհի կողմից կազմակերպվող մասնագիտական կողմնորոշման ներքին և արտագնա այցերի, իսկ 2%–ը՝ բուհի կատարած ճանաչողական այցերի շնորհիվ:

Հարց 7. Ինչո՞ւ եք ընտրել ՀՖԿՍՊԻ-ն:

Գծապատկեր 3



Բուհի ընտրության հարցի դրդապատճառները կարևոր նշանակություն ունեն ուսանողի կրթական հետագծի ուսումնասիրման համար: Այս առումով նշանակալի է, որ հարցվածների մեծամասնությունը իրականացրել է գիտակցված ընտրություն: Նրանց գրեթե 38%–ը բուհն ընտրել է, քանի որ այստեղ կա իրեն հետաքրքրող

մասնագիտությունը, 23%–ը՝ որպեսզի մարզիչ դառնա, 22%–ը՝ որպեսզի զարգանա որպես մարզիկ (տե՛ս Գծապատկեր 3):

Հարցվածների միայն 2–ական տոկոսն են բուհն ընտրել այստեղ հեշտ ընդունվելու և/կամ սովորելու համար:

Հարց 8. Ինչո՞ւ եք ընտրել տվյալ մասնագիտությունը:

Գծապատկեր 4



Մասնագիտության ընտրության հարցում ստացված պատկերը ևս փաստում է այն մասին, որ հարցմանը մասնակցած ուսանողների գերակշիռ մասը բուհ դիմել է իրեն հոգեհարազատ/ իր երազած (83%) մասնագիտությունը ստանալու համար (տե՛ս Գծապատկեր 4): Ինստիտուտում գործող ուսման վարձավճարների չափը էական դերակատարում չի ունեցել մասնագիտության ընտրության հարցում:

Հատկանշական է, որ կան նաև այնպիսի ուսանողներ, ովքեր նույնիսկ ուսումնառության ընթացքում չեն հստակեցրել իրենց մասնագիտական նախասիրությունները և նշում են, որ տվյալ մասնագիտությունը ընտրել են պատահաբար (հարցվածների 4%–ը՝ ՖԴՍՄ կրթական ծրագրից):

Հարց 9. Գնահատեք ընդունելության քննություններ բարդությունը:

Գծապատկեր 5



Հատկանշական է, որ թեև ՖԴՍՄ կրթական ծրագրի ընդունելության նորմատիվները վերանայվել են ու հեշտացվել, սակայն ընդունելության քննությունների մուտքային պահանջները հարցման մասնակիցների մեծամասնության կողմից գնահատվում է «միջին»՝ 69%: Ընդունելության քննությունները շատ հեշտ են համարել հարցվածների 6%–ը, իսկ հեշտ՝ 18%–ը:

Ընդունելության քննությունները հեշտ կամ շատ հեշտ են համարել մեծամասամբ ՖԴՍՄ կրթական ծրագրի «Փրկարար գործ» (6 հոգի), «Բռնցքամարտ» (5 հոգի) և «Ֆուտբոլ» (4 հոգի) մասնագիտացմամբ ընդունված ուսանողները: Հետաքրքրական է, որ սրանք այն մասնագիտություններն են, որտեղ մշտապես գրանցվում են ընդունելության բարձր ցուցանիշներ:

Հարց 10. Գնահատեք ընդունող հանձնաժողովի աշխատանքը (փաստաթղթերի ընդունում, հարգալից վերաբերմունք, հարցերի պատասխաններ, քննության կազմակերպում):

Գծապատկեր 6



Ընդունող հանձնաժողովի աշխատանքը հարցված առաջին կուրսեցիների գերակշիռ մասը լավ (44%), շատ լավ (27%) և գերազանց (22%) է գնահատել:

Հարց 11. Աշխատո՞ւմ եք այժմ:

Գծապատկեր 7



Ուսանողների հաճախելիության համար կարևոր նախապայման է աշխատանքային զբաղվածությունը: Հարցմանը մասնակից առաջին կուրսի ուսանողների գրեթե 40%–ը աշխատում է, իսկ 52 %–ը ցանկություն ունի աշխատելու (տե՛ս Գծապատկեր 7): Սա նշանակում է, որ աշխատելու և/կամ աշխատանքի անցնելու հանգամանքը կարող է նպաստել ուսանողների վատ հաճախելիությանը:

Նշենք, որ, ըստ հարցվածների տված պատասխանների, առաջին կուրսում մասնագիտական զբաղվածություն ունեն հիմնականում ՖԴՍՄ կրթական ծրագրի (ֆուտբոլ) ուսանողները:

Հարց 12. Ուսուցման ավարտին ի՞նչ կցանկանաք ձեռք բերել:

Գծապատկեր 8



Ինչպես վերջին 4 ուսումնական տարիներին, այս տարի ևս առաջին կուրսեցիների համար ուսումնառության ակնկալելի վերջնարդյունքն ավարտելուց հետո մասնագիտությամբ աշխատելու համար անհրաժեշտ գիտելիքների ձեռքբերումն է՝ 31% (տե՛ս Գծապատկեր 8): Սակայն, մտահոգիչ է, որ ուսման ավարտին պարզապես մասնագիտական դիպլոմ ստանալ ցանկացողների թիվը տարեցտարի աճում է (*ցուցանիշների համեմատականը՝ ըստ ուսպարիների տե՛ս Գծապատկեր 9):*

Գծապատկեր 9



Հարկ է նշել, որ 2023-2024 ուստարում ևս պարզապես դիպլոմ ստանալու համար ՀՖԿՍՊԻ ընդունված ուսանողների քանակը մեծ է հատկապես ՖԴՍՄ կրթական ծրագրի «Փրկարար գործ», «Բռնցքամարտ» և «Ֆուտբոլ» մասնագիտացումների ուսանողների դեպքում՝ համապատասխանաբար հարցվածների 40%, 33%, 32%:

Հարց 13. Բուհն ավարտելուց հետո պատրաստվո՞ւմ եք աշխատել Ձեր ընտրած մասնագիտությամբ:

Գծապատկեր 10



Հարցման մասնակիցները հիմնականում նշում են, որ բուհն ավարտելուց հետո պատրաստվում են աշխատել իրենց մասնագիտությամբ (տե՛ս Գծապատկեր 10): Հարցված ուսանողներից միայն երեքը («Վոլեյբոլ», «Բասկետբոլ», «Մարզական լրագրություն») չեն ցանկանում աշխատել իրենց մասնագիտացմամբ:

Հարց 14. Որտե՞ղ եք պլանավորում աշխատել բուհն ավարտելուց հետո:

Գծապատկեր 11



Այս հարցն ուսանողներին տրվել է հասկանալու համար՝ արդյոք նրանք նպատակ ունեն աշխատել իրենց մասնագիտությամբ (տե՛ս Գծապատկեր 11): Սակայն, միևնույն

ժամանակ, քիչ չէ այն ուսանողների թիվը, ովքեր դեռևս չեն պատկերացնում իրենց մասնագիտական գործունեությունը՝ հարցվածների 20%–ը: Հարցմանը մասնակցած ուսանողների 15%–ը նշել է, որ ցանկանում է զբաղվել սեփական բիզնեսով՝ հիմնականում «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» կրթական ծրագրի և «Ֆուտբոլ» մասնագիտացմամբ ուսումնառողները:

Հարց 15. ՀՖԿՍՊԻ-ում ուսումը կնպաստի՞ աշխատել Ձեր նախընտրած մասնագիտությամբ:

Գծապատկեր 12



Հատկանշական է, որ հարցվածների մեծ մասը վստահ է, որ բուհում ուսումն օգնելու է աշխատել նախընտրած մասնագիտությամբ (տե՛ս Գծապատկեր 12):

Հարց 16. Ո՞ւմ եք դիմում ուսման հետ կապված դժգոհություններ կամ առաջարկներ ունենալու դեպքում

Գծապատկեր 13



Հարցումից պարզ է դառնում, որ ուսանողներն իրենց հարցերով հիմնականում դիմում են ամբիոնների վարիչների և դասախոսներին (տե՛ս Գծապատկեր 13): Այս

պատկերը պայմանավորված է այն հանգամանքով, որ առաջին կուրսում վերջիններիս շփման շրջանակը դեռ ընդլայնված չէ դեպի ուսանողական կառույցներ կամ ուսումնաօժանդակ այլ բաժիններ: Հատկանշական է, որ իրենց հուզող հարցերով ու կրթական կարիքներով Ուսանողական խորհրդին և համակուրսեցիներին դիմող ուսանողների թիվը բաշխվել է գրեթե հավասարաչափ:

Հարց 17. Ի՞նչ դժգոհություններ կամ առաջակներ ունեք Ձեր ուսման հետ կապված:

2023-2024 ուսումնական տարվա առաջին կուրսի ուսանողները դեռևս դժգոհություններ կամ առաջարկներ չունեն: Որոշ ուսանողներ խնդրել են վերանայել կրթաթոշակների չափը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՖԿՍՊԻ-ի առաջին կուրսի ուսանողների հետ անցկացված հետազոտության արդյունքների վերլուծությունից պարզ է դառնում, որ՝

Ինստիտուտի գործունեության, բուհում իրականացվող կրթական ծրագրերի վերաբերյալ դիմորդները շարունակում են տեղեկանալ ընկերներից ու ծանոթներից (59%), իսկ բուհի ընտրության հիմնական պատճառը մնում է հետաքրքրող (38%) և հոգեհարազատ (58%) մասնագիտությանը նախապատվությունը տալը:

ՀՖԿՍՊԻ ընդունվածների 39%–ն աշխատում է, իսկ 52%-ն ունի աշխատելու ցանկություն: Թեև ուսման ավարտին ուսանողների մեծամասնությունը ցանկանում է ստանալ մասնագիտությամբ աշխատելու համար անհրաժեշտ գիտելիքներ (31%), սակայն տարեցտարի աճում է մասնագիտական դիպլոմ ձեռքբերելու ցանկությամբ բուհ ընդունվածների թիվը (26%): Բուհն ավարտելուց հետո ուսանողների մեծամասնությունը՝ 65%–ը, պատրաստվում է աշխատել իր ընտրած մասնագիտությամբ: Նրանց հիմնական մասը ցանկություն ունի ավարտելուց հետո աշխատել մարզական կամ սպորտային կառույցներում (24%), իսկ 72%–ը համոզված է, որ բուհում ուսումնառությունը կնպաստի նախընտրած մասնագիտությամբ աշխատանք գտնելուն: Ուսումնառության հետ կապված հարցերի կամ առաջարկների դեպքում առաջին կուրսի ուսանողները դիմում են դասախոսներին (26%) կամ ամբիոնների վարիչներին (25%):

Ուսումնասիրելով բացասական պատասխանների հետագիծը տարբեր հարցերի շուրջ՝ վեր հանվեց պատկեր, ըստ որի այն մասնագիտացումներում, որոնց առավել մեծ թվով ուսանողներ են դիմել («Փրկարար գործ», «Բռնցքամարտ» և «Ֆուտբոլ»), առաջին

կուրսեցիները բուհի ընդունելության քննությունները որակել են հեշտ կամ շատ հեշտ և բուհ եկել են հիմնականում դիպլոմ ստանալու համար (համապատասխանաբար հարցվածների 40%, 33%, 32%):

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

- ✓ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարիներ շարունակ ուսանողները ՀՖԿՍՊԻ մասին տեղեկանում են իրենց ծանոթներից, բարեկամներին ու բուհում սովորող ընկերներից՝ անհրաժեշտ է վերանայել ու զանազանեցնել բուհի մասին իրազեկելու գործիքակազմը՝ չսահմանափակվելով տարեկան մի քանի իրազեկման այցով:
- ✓ Քանի որ բուհ նոր ընդունված ուսանողներից շատերը դեռ տեղյակ չեն իրենց ֆակուլտետի, ուսումնաօժանդակ կառույցների, ապագա կարիերայի հնարավորությունների մասին, հարկ է իրականացնել տեղեկատվական օրեր 1-ին կուրսեցիների համար, որոնց ընթացքում մանրամասնեցված կներկայացվեն ուսումնաօժանդակ կառույցները, դրանց դիմելու ընթացակարգերը, ուսման ընթացքում ուսանողների իրավունքներն ու պարտականությունները, բուհի ընձեռած հնարավորություններն (կրթաթոշակ, շարժունության ծրագրեր, մրցաշարեր, փոխանակման ծրագրեր, լրացուցիչ կրթություն և այլ) ու ուսման ավարտին աշխատանքի ու կարիերայի հնարավորությունները:
- ✓ Հաշվի առնելով ՈԱԲ իրականացրած հարցումների արդյունքում դուրս բերած խնդիրների և առաջարկների կարևորությունը՝ անհրաժեշտ է մեծացնել ամբիոնների աջակցությունը ՈԱ բաժնին հարցումներին ավելի մեծ մասնակցություն ունենալու և որոշ ամբիոնների անտարբերությունը նմանօրինակ միջոցառումներին բացառելու համար:
- ✓ Որպես գործընկեր բուհ ներգրավել ոլորտային այնպիսի գործատուների, որոնք կապահովեն ճկուն գրաֆիկով աշխատատեղեր ուսանողների համար՝ նվազագույնի հասցնելով կրթությանը զուգահեռ աշխատելու դժվարությունները: